

Նորագույն շրջանի մանկական պոեզիայի ուսումնասիրությունն ու գիտական արժեքավորումը պահանջում են նոր մոտեցումներ, ժամանակակից կենսահայացք՝ պայմանավորված ազգային նոր գաղափարաբանությամբ եւ մանուկ ընթերցողի կրթությամբ, դաստիարակության եւ ուսուցման գործընթացին ներկայացվող նոր պահանջներով:

Սկսած 1950-ական թվականների վերջերից՝ հայ մանկական պոեզիան նույնպես փորձում էր գնալ գաղափարախոսական արգելքների հաղթահարման, թեմատիկ շրջանակների ընդլայնման, դասական մանկագրության ավանդույթների վերականգնման, ճշմարիտ քնարերգության հաստատման ճանապարհով: Ձարգացման այս միտումները դրսևորվեցին Պ. Խաչատրյանի, Ս. Մուրադյանի, Ն. Միքայելյանի, Լ. Սարգսյանի, Յու. Սահակյանի, Արմ. Մարտիրոսյանի, Էդ. Միլիտոնյանի, Արմ. Շեկոյանի եւ ուրիշների ստեղծագործություններում:

Ոգեւորված սեւակյան բարենորոգչական գաղափարներով ու գործունեությամբ՝ մանկագիր բանաստեղծները սկսեցին ավելի լրջմիտ վերաբերմունք ցուցաբերել դեպի մանկական պոեզիան՝ նպատակ ունենալով այն դուրս բերել «խաղիկ ջանգյուլումների» մացառուտներից ու տանել զարգացման բնական ուղիով:

Մանկագիր բանաստեղծներից շատերը գրականություն եկան ավելի նսյաստավոր պայմաններում. չապրեցին անհատի պաշտամունքի տարիների սարսափներն ու ողբերգությունները, չենթարկվեցին գաղափարախոսական կտտանքների, եւ, որ ամենակարեւորն է, նրանց կողքին էին Պ. Սեւակն ու Հ. Սահյանը, որոնք ներքին վստահության էին մղում իրենց ներկայությամբ:

Ինչպես ժամանակաշրջանի ճանաչված բանաստեղծների, այնպես էլ մանկագիրներից շատերի ստեղծագործություններում 1960-ական թթ. առաջատար դարձան մարդու փառաբանության եւ հոգեւոր հարստությունների բացահայտման, հեռավոր ու մոտիկ անցյալին տեղ կանգնելու, պատմության դասերը ազգային զարթոնքի տենանկյունից լուսաբանելու, բնության հետ ներդաշնակվելու, կորցրած տեսողությունն ու լսողությունը վերականգնելու ընդգծված միտումները: Ճշմարիտ քնարերգության հաստատման ուղեւիշ փարոսը Ե. Չարենցի պոեզիան է, որն առաջադրում էր գեղարվեստական խոսքի նոր չափանիշներ:

М. М. Гилаян - Тенденции развития армянской детской поэзии за период 1960-1980 гг. - Детская литература - составяющая часть общей литературы. Однако, являясь таковой, она выделяется некоторыми отличительными особенностями.

Читателями детской литературы являются дети 3-15 лет, и в ней тесно сплетаются педагогические и психологические особенности развития индивидуума, а так же возрастные и умственные его способности.

387 թվականին, Տիգրանի դաշնագրով Հայաստանը բաժանվեց երկու մասի, երկու ագրեսիվ պետությունների միջև՝ Պարսկաստանի եւ Բյուզանդիայի: Հայաստանի այն մասը, որ ընկավ բյուզանդական տիրապետության տակ, կորցրեց իր ինքնուրույնությունը: Բյուզանդիան Հայաստանի այդ մասը ղեկավարում էր իր հավատարմատար մարզպանների միջոցով: Հայաստանի այն մասը, որ ընկավ պարսկական տիրապետության տակ, պահպանեց իր պետականությունը մինչեւ 428 թվականը: Սկսվում է գոյապայքարի նոր պատմաշրջան: Ազգապահպանության եւ թագավորության պահպանման համար մեծ միսիա էր ընկնում այս հատվածի վրա: Հարկավոր էր նախ պահպանել թագավորությունը, ձգտել վերամիավորման, եւ ապա պահպանել ազգությունը: Դժվարին կացության մեջ ընկավ հայ ժողովուրդը: Ազգությունը կարելի էր պահպանել լեզվի եւ հավատի միջոցով: Բայց ինչպես կարող էին պահպանել ազգային լեզուն եւ հավատը, երբ հայոց եկեղեցիներում ժամերգությունը կատարում էին հունարեն կամ ասորերեն:

301 թվականին հայերն ստիպված եղան հրաժարվել հեթանոսական հավատից եւ ընդունել քրիստոնեական կրոնը: Դա նպաստում էր նաեւ կենտրոնացված իշխանությանը. միաստվածությունը տանում էր դեպի միապետություն: Բայց դա էլ չփրկեց: Ընդհակառակը: Տիրապետող երկիրը պարտավորեցնում էր իր հավատը եւ պահանջում հրաժարվել ազգային կրոնից: Հավատի ազատության համար հարկավոր էր եկեղեցու անկախություն: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւը չունեւր այն համարձակությունը, ինչ իր հայրը՝ Ներսես Մեծը: Նա աշխատում էր Հայոց եկեղեցու իրավունքները պահպանել խաղաղ բարենորոգչական եղանակով: Բայց ինչպես կարող էին անկախապահել հայոց եկեղեցին, երբ ժամերգություններն ու կրոնական ծեսերը կատարվում էին օտար լեզվով: Մեծ էր եկեղեցու դերը, որովհետեւ հավատի աշխարհայացքային միտքը, գաղափարը, հաղորդվում էր եկեղեցու միջոցով: Պատմական պահի ընկալման, ճիշտ կողմնորոշման պատիվը պատկանում էր նրան, ով կարող էր առաջինն զգալ ելքը գտնելու կարելությունը, մատնացույց անել հարցի լուծման ճանապարհը: Ու ոչ միայն դա. դառնալ այդ հարցի լուծման նախաձեռնողն ու իրագործողը: Ո՞վ կարող էր լինել այդ մեծ քաղաքագետը: Պատմական այս դժնդակ ժամանակաշրջանին է նվիրված Պարույր Սեւակի «Եվ այդ մի Սաշտոց անուն» պատմական պոեմը: Բայց նա պոեմն սկսում է նախապատմական շրջանից, որպեսզի ավելի ընդգրկի Սաշտոցի արածի մեծությունը: Իր հանճարեղ կանխատեսմամբ նա ապացուցեց, որ հենց այնտեղից է սխրանքն սկսվում, «ուր վերջանում է ամեն մի հնար»:

Սեւակը Սաշտոցին պատկերում է ոչ միայն որպես հանճարեղ գիտնական, մեր դպրության հայր, այլ որպես մեծ քաղաքագետ, որ այդ ծանր, դժնդակ պահին, երբ վերջացել էր «ամեն մի հնար», հայ ժողովրդի գոյատեւման նախապայմանը նա համարում է հայոց ազգային դպրության, գրի ու գրականության ստեղծումը: Սաշտոցի մասին շատերն են գրել. Սեւակից առաջ, եւ Սեւակից հետո: Սակայն ոչ մեկը չի կարողացել հյուսել պատմական այն հենքը, որի վրա հյուսվել է մաշտոցյան գրերի առասպելական վավերագրությունը, այն սքանչելի պոեմը, որի սկիզբը «Ա» հատվածից մինչեւ «Բ» հատվածը, մի հմայիչ դրուցագներգություն է հեթանոս հայերի պատմության հիւ մեր ողբերգական անցյալի մասին: Ահա այստեղ է փայլատակում Սեւակի հանճարեղ միտքը, պոեմի շարադրման աստվածային ներշնչանքը, որով այս պոեմը դառնում է մի նոր մակարդակ մեր քնարերգության պատմության մեջ:

Սեւակը պոեմն սկսում է նախապատմական դարաշրջանից, երբ ասորա-բաբելոնական բռնություններից հալածված մենք ստիպված հեռանում էինք արծակ դաշտերից եւ գնում դեպի լեռնալանջերն ու լեռնահովիտները, երբ մենք թողնում էինք հորդահոս գետերն ու գնում դեպի սարալանջերն ու սարահովիտները, ու հայ շինականը հայացքը դեպի երկինք հառած սպասում էր անձրեւի, որ ցանքը չխանձվի արեւի տակ: Բայց մենք դրանից առաջ էլ կայինք, եւ արդեն ձեւավորված ժողովուրդ էինք՝ քաղաքակրթության բարձր աստիճանի վրա.

Լեռը ծակելով՝
Մենք նրա միջով ջուր էինք տանում
Ու շռայլ բանում
Մեր այգիների այրի արգանդին:
Իսկ ամու կավին տալիս էինք մենք
Չելը Վարսանդի
Եվ կոչում կարաս,
Որի մեջ հետո լողացնում էինք գարին մեր մաքուր,
Եվ մկրտության այդ ջուրը դեղին
Հարբածությունից նույնիսկ առավել
Ձարմանք էր ազդում այն գոռոզներին,
Որ մեզ այսուհետ
Չէին հանդըզնում կոչել բարբարոս:

լեւ ստեղծում են նրան, ինչպես «...Արցունքն է ծնվում աչքի մեջ, երբ որ աչքի մեջ ընկնում է ավազ»... Ավազ էր ընկել Հայոց աչքի մեջ, եւ արցունքը չէր օգնի նրա գոյատեւմանը, այլ հնար էր պետք արցունքը կտրելու, արցունքը սրբելու համար: Եվ համեմատել կամխատեսմամբ Մաշտոցը գտավ հայ ժողովրդի գոյատեւման այն մեծ ճանապարհը, այն զորավոր ուժը, որը պետք է ասի համեր մեր ժողովրդի փրկության նավը ահագնացած օվկիանոսից: Մեր դարավոր թշնամիներին Մաշտոցը հաղթեց ոչ թե մատյան գնդերով, այլ մատյան դպրությամբ: Պարոնյր Սեւակը մեր քնարերգության սուրբ նավանդներով եւ զորեղ գրչով օրհներգում է այդ համեմատել մարդու ծնունդը, որով մեր բազմադարյան ժողովուրդը մտավ մի նոր դարաշրջան: Նրանից առաջ մենք եղել էինք, եւ շատ զորավոր, եւ նաեւ՝ տկար: Նոր հավատը իր հետ բերում էր նոր պահանջներ, եւ մենք կկործանվեինք, եթե ժամանակին չզգայինք այդ նոր հավատի հովանավոր նենգության տխուր հեռանկարը: Եվ զարմանք են պատճառում Սեւակի համեմատի շողարծակունները, թե նա ինչպես է դարերի հեռվից նկատել այդ բոլորը եւ վիթխարաթիչք կամուրջ ձգել դարերի վրայով՝ երեւակայությամբ համահարթելով իր մտքի ճանապարհը, տեսնելով մեր ժողովրդի պատմական անցյալը, նախապատմական ժամանակաշրջանից սկսած, դարերով ձգվող վաղ միջնադարը, նրա մոտավոր անցյալը, ներկան ու ապագան:

*Բայց մինչ դպրության հին աստվածը մեր
Շարունակ միայն մի գործ էր անում՝
Մարդկանց հոգին էր առնում ու տանում,
Սա եկավ, որ մեզ հոգի պարզելի...*

*Այո՛, մենք կայինք նրանից առաջ.
Սակայն Նա եկավ, որ Հոգի՝ դառնա.
Սակայն նա ծնվեց, որ Սնո՝ լնդ դառնա:
Եվ անմահացա՛վ.
Որ անմահանա՛նք...*

Սեւակը պոետում չի նկարագրում Մեսրոպ Մաշտոցի գիր արարելու հանգամանքները, ոչ էլ Հայոց թագավորի, կամ՝ Ամենայն Հայոց Հայրապետի մտահոգությունը՝ գիր ստեղծելու անհրաժեշտության մասին: Պատմական հենքի անսխալ ըմբռնումն է, որով ավելի է վավերական դառնում նրա քնարական հյուսվածքը եւ ընդգծում գիտնական բանաստեղծի գիտական ու բանաստեղծական մտքի զորությունն ու թռիչքի անսահմանությունը:

Դարաշրջանը, պատմության բախտորոշ պահը ծեռնոց նետեց հայ ժողովրդին, եւ նա դրան պատասխանեց Մաշտոցի հանձարով: Այո՛, Մաշտոցը պատասխանեց մարտահրավերի բարդ ու դժվարին հարցին. պատասխանեց՝ իմաստուն կանխատեսմամբ եւ անսխալ տրամաբանությամբ: Երբ հայերը տեսան, որ հեթանոս հարեւանները ուզում են ասիմիլյացիայի ենթարկել իրենց, հրաժարվեցին հեթանոսական հավատից ու անցան քրիստոնեական հավատին, եւ կարծ ժամանակում այդ հավատը կրոն դարձավ: 301 թվականին հայերը պաշտոնապես պետականորեն ընդունեցին քրիստոնեական կրոնը: Հենց այդ կրոնով էլ մենք բյուզանդացին ուզում էր պապականացնել հայ ժողովրդին, եւ Մաշտոցը դարձավ այն մեծ մարգարեն, որ զգաց պապականացման տխուր հեռանկարը. զգաց սեփական գրի ու գրականության անհրաժեշտությունը, որով կարելի էր պահպանել եւ հավատը, եւ խղճի ու ոգու անկախությունը: Գոյատեւման պայքարի հաղթանակի նախահիմքը նա տեսավ ազգային ինքնությունը դպրության մեջ, եւ դարձավ այդ դպրության հիմնադիրը: Ազգապահպանման հիմնական ֆակտորներից մեկն էլ լեզուն է, չէ՞ որ ազգային դպրությունը ստեղծելու զորավոր ուժը ազգային լեզուն է, իսկ ազգային լեզվի գոյությունը պայմանավորված էր ազգային գրով. ազգային այբուբենով: Ազգի բնորոշման առաջին հատկանիշը լեզուն է: Նա է ազգային ոգու զորության արտահայտիչը: Ահա թե ինչ է գրում բանաստեղծը.

*Իսկ իսկություն չէ՞,
Որ գործից հետո
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
Եվ ինչ չի կարող ոչ մի գործ անել՝
Լեզուն է անում:*

Մաշտոցի համար գիր ստեղծելը դժվարին գործ չէր, որովհետեւ գրեր ունեցող ժողովուրդներ արդեն կային: Լատինական այբուբենը համարյա նույնությամբ վերցրին անգլիացիները, ֆրանսիացիները, գերմանացիները, սլավոնները: Կարելիորը հնչյունական համակարգն էր, որ գիտական ճշգրտությամբ հայտնագործեց Մաշտոցը, թե քանի հնչյուն ունի հայերենը, եւ դրան համապատասխան ստեղծեց տառերը: Ընդ որում ամեն մի հնչյունին համապատասխան ստեղծեց տառը: Սլավոնները, օրինակ՝ «Բ» տառը գրում են եւ «Բ»-ի փոխարեն (Ѣрѣа) եւ «Ռ»-ի փոխարեն (Ѡама), իսկ մաշտոցյան այբուբենում կան այդ բո-

1 Պ. Սեւակ, նշվ. ժողովածու, էջ 257-258:
2 Նույն տեղում, էջ 251:

լորը: Այդ նույն մակարդակով նա ստեղծեց վրացական եւ աղվանական այբուբենը:

Խոսելով Աղվանից աշխարհի եպիսկոպոսների (կաթողիկոսների) մասին, Կիրակոս Գանձակեցին հիշատակում է նաեւ Եսվաղենի անունը, որին Սուրբ Գրիգոր Եպիսկոպոս (Իմա՝ կաթողիկոս) է օծում Է: համեմատում Ուրմայր թագավորին: «Սրա օրոք երանելի Մեսրոպը գիր ստեղծեց հայերի, վրացիների ու աղվանների համար»¹:

Այս մասին Սեւակը չի գրում իր պոետում, սակայն պոետական ատաղձը սա է. խտանում, բյուրեղանում է նրա բանաստեղծական միտքը, զորավոր են դառնում պատմական փաստերի վրա արված նրա մտահանգումները եւ ավելի պայծառորեն, իր ամբողջ վեհությամբ, դարերի հեռվում ուրվագծվում, ձեւավորվում է Հայոց Մեծ Լուսավորչի վեհ ու վսեմ դիմապատկերը, նրա անգուգական քնարական կերպարը: Ահա ինչպես է բնութագրում Սեւակի այս պոետը անվանի գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը. «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոետը հզոր տաղանդի ստեղծագործություն է, ուր գեղարվեստական մտածողությունը հասնում է փիլիսոփայական անսովոր խտացման»²:

Սեւակի այս պոետը՝ գրելու տարեթիվն ու տեղն էլ հաշված, 655 տող է, եւ պատմելու վեց ռոպեաչափ սյուժե չունի: Բայց բանաստեղծական խոսքը հասել է այնպիսի կոսմիկական խտացման, որ իր մեջ ընդգրկում է երկուսուկես հազարամյա պատմություն, որի ֆոնի վրա տրված է պոետի քնարական հերոսի սխրանքն ու իմաստությունը: Նկարագրված է նաեւ պոետի քնարական հերոսի ապրած դարաշրջանը, այն՝ ծանր պահը, երբ դրված էր մեր ժողովրդի գոյատեւման խնդիրը: Նրան նախորդած այն հազարամյակի ընդհանուր պատկերը, երբ ձեւավորվում էր մեր ժողովուրդն ու թագավորությունը: Նաեւ այն դարաշրջանը՝ շուրջ 1600 տարի, երբ այդ ժողովուրդը փրկվել էր ասիմիլյացիայի վտանգից եւ գոյատեւում էր՝ պոետի քնարական հերոսի՝ Մեսրոպ Մաշտոցի, համեմատել դիվանագիտության եւ հայտնագործության շնորհիվ:

Ամբողջ պոետը բաղկացած է 13 հատվածից, որից առաջին հատվածներում պատմում է նա նախորդ դարերի մեր ողբերգական այն պատմաշրջանը, երբ հայ ժողովուրդը ապավինած իր հին աստվածներին, պայքարում էր ասորա-բաբելոնական եւ բյուզանդա-պարսկական բռնությունների դեմ՝ պահպանելով իր թագավորությունն ու հեթանոսական հավատը՝ քաղաքակրթության դասեր տալով իր ախոյաններին:

Երկրորդ հատվածում նա ներկայացնում է այն պատմաշրջանը, երբ տեղի է ունենում հին եւ նոր աստվածների, նաեւ հին եւ նոր հավատների բախումը. առավելությունը տալով մեր հին աստվածներին, որոնք «ճշտախոս էին» եւ այնքան անմեղ, որ «մարդկանց մարդ էին անվանում, իսկ իրենց աստված»: Եվ հենց դրանով նրանք եւ զորավոր էին, եւ համակրելի, եւ հավատալի, եւ շոշափելի: Երրորդ հատվածում բանաստեղծը աներեւակայելի խտացմամբ ու բանաստեղծական մեծ արվեստով, չափածո խոսքի սահմանափակ հնարավորություններով, տալիս է հին աստվածների կործանման, եւ նոր աստծու հաստատման, նրա գոյապայքարի բռնի հաղթանակի նենգամիտ քաղաքականությունը, որով ի վերջո ճորտացրին մեր ժողովրդին իր իսկ հայրենիքում՝ «Հավասարության ու եղբայրության ազնիվ քարոզով»՝ պարտադրելով իրենց վարքն ու բարքը, իրենց բռնատիրական կամքը: Հավատը դարձավ կրոն, կրոնը՝ գաղափարախոսություն, որը ծառայում էր այն բռնապետությանը, ով շարունակում էր նվաճողական քաղաքականությունը հարեւան երկրների նկատմամբ: Այդ գաղափարախոսությամբ «Ավերակվել էր երկիրը հայոց» եւ «խորովվում էր» բյուզանդա-պարսկական ծանր լծի տակ.

*Մե՛ր հոգի վրա,
Մե՛ր երկնքի տակ
Մենք դարձել էինք օտարի գաղութ՝*

Ինչ զենքով կարող էր այդ գաղութացված ժողովուրդը կռվել եւ գոյատեւել այնպիսի հզոր տեությունների հզոր զենքի տակ, ինչպիսին Բյուզանդիան եւ Պարսկաստանն էին: «Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց»: Բայց ո՞ւր էր այն զորավոր զենքը, որ կարող էր փրկել Հայաստանը, որ նստած էր «իրար չկպած ծայրերի վրա այն աթոռների», «Որոնց տակ անտակ անդունդ էր բացվում»: Պարսկա-բյուզանդական մենք քաղաքականության դեմ հզոր զենք էր պետք, այնպիսի մի զենք, որ իր դիվանագիտական հեռահար հեռանկարով փրկեր ժողովուրդը անտակ անդունդից: Եվ բանաստեղծը պատմության ատաղձի վրա տալիս էր իր պոետի քնարական հերոսի ծնունդը, որ աստվածային շնորհով օժտված մարդ էր սովորական, որ պիտի ապացուցեր, «Որ այնտեղ է լույս սխրանքն սկսվում», «Ուր վերջանում է ամեն մի հնար»: Այդ նա էր, որ ձեւավորեց «Մի զենք ժանտախոյս» եւ բացեց քաջաբար կռվի մի ծով ասպարեզ, ուր «Այրուծիի տեղ մտքերն են կռվում», «Թանաք է հեղվում արյան փոխարեն», «Եվ հաղթանակը կոչվում է Մատյան»... Համեմատել բանաստեղծը իր տաղանդին հատուկ շքեղությամբ եւ համեմատել վայել հիացումով օրհներգում է հերոսի ծնունդը.

*Այո՛, մենք կայինք նրանից առաջ.
Հորո թե տկար՝
Մարմին էինք մենք:*

1 Տես՝ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 142:
2 Տես՝ Պ. Սեւակ, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, հ. 1, Ե., 1972, էջ 17. Ս. Սարինյանի «Պարոնյր Սեւակի արեղծագործությունը» վերնագրով առաջարկը:
3 Պ. Սեւակ, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1973, էջ 249:

Սակայն նա եկավ, որ Հոգի դառնա
Շոշափվող հոգի,
Եվ անմեղ հոգի:

Այո, մենք կայինք նրանից առաջ,
Քիչ թե շատ՝ կար հաց,
Եվ ունեինք ջուր:

Սակայն նա ծնվեց, որ Անո՛ւնդ դառնա
Ծնվե՛ց, որ ծնե՛նք,
Եղա՛վ, որ լինե՛նք
Եվ անմահացավ,
Որ անմահանա՛նք...

Սեւակի պոեզիան, նաեւ պատմական պոեմները, այդ թվում՝ «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմը, գերծ են արեւելյան քնարերգությանը հատուկ պաթետիկ պատկերներից ու գունագարդումներից: Նրա պատկերները իմաստավորված են բնահողային բույրով, խորը փիլիսոփայությամբ եւ պատմագիտական ճշմարիտ իմացությամբ ու մտահանգումներով: Ո՛ր աշխարհից եկավ, որ ակունքից բխեց, ինչ հունով հոսեց, եւ ինչ արավ նա՝ Մաշտոցը, իր ծնունդով:

Միջնահատված էր մեր հողը բնիկ,
Ծեղքված էր արդեն հայրենիքը մեր:
Եվ նա չծնվեց ինչ-որ մի մորից:
Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ,
Որ ճեղքը լցնի գեթ ինքն իրենով:
Եվ այդ ճեղքը նա լցրեց իսկապես.
Մեր բաժան-բաժան հողերը մորից
Այդ նա էր միայն, որ բերեց իրար
Որ միավորեց... արդեն մեր մտքո՛ւմ...

Շարադրում է պատմության փուլերը պոեմի 10-11-րդ հատվածներում, թե ինչպես մորից դիվանագիտական խաղերով խաբեցին մեզ, այնպիսի նրբին խարդավանքով, որ մեր «հին խաբեբան»՝ մոր բյուզանդացին «զարմանար ինքը» տեսնելով, թե ինչպես է հայ ժողովուրդը առանց «պետ ու պետության» գաղութ է դառնում» «Գաղութի մարգար-կառավարիչով» եւ դարեր շարունակ գնում անկումից անկում՝ երազելով հայոց թագավորության վերականգնման մասին, որ երազեցինք ավելի քան 600 տարի:

Իր հրեղեն խոսքով հանճարեղ բանաստեղծը դատապարտում է մեր ախոյանների ազգակործան քաղաքականությունը եւ ուրվագծում այն դժվարին ու երկար ճանապարհը, որով մենք անցանք մաշտոցյան հոգու եւ մտքի լույսով:

Սեւակը հեռացավ, հրաժարվեց մեր քնարերգության ավանդական տաղաչափությունից, բայց ոչ մեկն այն-քան հարազատ չմնաց մեզ մեր քնարերգության ազգային ոգուն, որքան նա: Նաեւ՝ մեր ազգի տարաբախտ ճակատագրին, նրա մշտամորմոք ցավերին: Տող առ տող պիտի մեկնաբանել, վերլուծել, հասկանալու համար այն ամենը, ինչ խտացված ձեւով արված են այդ տողերում: Ահա ինչ է գրում նա պոեմի 12-րդ հատվածում՝ օրհներգելով Մաշտոցի ծնունդն ու նրա արած գործը.

Մեզ սպանացող վտանգի չափ մեծ
Եվ այդ վտանգից նաեւ ահագին՝
Նա օտար հրի ճարակի դիմաց
Մեր ինքնությունը կոփեց ու կռեց.
Օտար եկամուտ վարակի դիմաց
Մահ համտես արած մեր ամենիմաց
Առողջությունը-որմի պես դրեց,
Դրեց խարդախված կաթի դեմ՝ մերան,
Քանակի դեմ՝ թեւ,
Թվի դեմ՝ թռիչք,
Արյան դեմ՝ թանաք,
Սրի դեմ՝ գրիչ,
Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...

Եղան մարդիկ, որ Սեւակի այդ ավանդախախտումը եւ մոր գրելածեւը համարեցին հանգակապություն: Սեւակը վերջնահանգը տողավերջից հաճախ բերում է տողամեջ, եւ ձգտում ոչ թե հանգավորմանը, այլ մտքի ու հանգի ներդաշնակմանը եւ կուռ փիլիսոփայական իմաստավորմանը: Սեւակի պատմական պոեմում էպիկական գործը շունչ ու ոգի է առնում մայրենի լեզուն: Նրա համար չկան բանաստեղծական եւ պրոզայիկ բառեր: Նա անկաշկանդ օգտագործում է մայրենի լեզվի ոչ միայն աշխարհաբար, այլեւ գրաբար, նաեւ խոսակցական լեզվի բառապաշարը, որտեղ որ անհրաժեշտ է: Եվ դրանով ոչ թե տուժել, այլ շքեղացել, ժողովրդական շունչ ու ոգի է առել նրա պոեմների լեզուն, նաեւ բանաստեղծական խոսքը, որի ատաղձը խարսխված է ժողովրդի կենդանի լեզվի եւ գրաբար լեզվի անբերեակայելի հարստությամբ: Դրանով հարստացել, ճոխացել, նաեւ հզորացել է բառապաշարը, որ առավելություն է, ոչ թե թերություն: Անգամ արտաքուստ բառախաղ թվացող խոսքում այնպիսի խտացումներ կան մտքի, որ մի ամբողջ դարաշրջանի պատմություն են ամփոփում, աֆորիզմի չափ բյուրեղացած մտահանգումներով: Ահա՝

Նույնիսկ հաղթվելով ժանտ բանականերից՝
Ժանտերից ժանտին հաղթեցինք կյանքում -
Հաղթեցինք դաժան ժամանակներին.
Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝
Հառնեցինք դարձյալ,
Մնացինք կանգուն.
Անվերջ ընկնելով՝
Վերաթեւեցինք.
Մեռնելով անվերջ՝
Գոյատեւեցինք...
Եվ հիմա արդեն այդ մե՛զ չեն պեղում...
Այլ մենք ենք պեղում,
Այդ մե՛զ չեն հիշում.
Այլ մենք ենք հիշում.
Մե՛զ չեն վկայում,
Մենք ենք վկայում...

Պոեմի վերջում բանաստեղծը ամփոփում է մեծ լեզվաբանի, հմուտ քերականի, մեծ գիտնականի եւ քաղաքագետի սխրանքը. «Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ» եւ «...Այնտեղ է լույս սխրանքն սկսվում», «Ուր վերջանում է ամեն մի հնար»...

Սեւակն իր այս պոեմում ավարտում չհամարեց իր խոսքը, նա դեռ ասելիք ուներ, եւ Մաշտոցի թեմային անդրադառնալով մորից՝ 1960-ական թվականներին, երբ լրացավ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Այդ հոբելյանի առթիվ նա գեկուցում կարդաց Հայֆիլիսոփայության մեծ դահլիճում՝ «Սրի դեմ գրիչ» Մաշտոցի սխրագործությունը»՝ վերնագրով՝, ուր նա ոչ միայն մեկնաբանել է իր պոեմի հարցադրումները, այլեւ մոր խոսք է ասել Մաշտոցի մասին, ծավալելով իր այն միտքը, որ Մաշտոցը նաեւ մեծ քաղաքագետ էր, եւ երաժիշտ: «Առանց երաժշտական շատ սուր ականջի, առանց նրբին լսողության անկարելի էր (եւ այն էլ առաջին անգամ) տարբերել ու տարբերակել մեր լեզվի թեկուզ բաղաձայնական եռաշարքը (ծ-ց-ծ, ճ-չ-ջ) եւ այլն»...

«Մաշտոցը, անտարակույս, հանճարեղ լեզվաբան էր, անմրցակից հետախույզ հնչյունական այն բարդ համակարգի, որ ունի եւ ունեցել է մեր լեզուն»¹: Բայց այս հանճարեղ լեզվաբանը չէր, որ Մաշտոցի հոգում որոնում էր քաղաքագետին, այլ այն հեռատես քաղաքագետը, որ «քաղաքագիտական մտքին տվեց լեզվաբանական կերպածեւություն» եւ կանխորոշեց մեր ժողովրդի գոյատեւման ճշմարիտ ուղին:

Որպես մեծ արվեստագետ Սեւակը ճշտում, վերաճշտում է իր տեսակետը, ընդլայնում իր հայտնագործած միտքը, գաղափարը, եւ դնում շրջանառության մեջ: Մեր դարավոր պատմությունից Սեւակը պոեմի քնարական-էպիկական հերոս դարձրեց երկու մարդու՝ Կոմիտասին եւ Մաշտոցին, որոնցից ոչ մեկը ոչ թագավոր էր, ոչ իշխան, ոչ զորավոր ու զորավար: Որոնք մինչեւ անգամ մեծ պաշտոն չեն ունեցել ոչ թագավորական, ոչ էլ իշխանական, նախարարական տներում. մեկը եղել է որբ ու անպաշտպան մի երեխա, մյուսը՝ ազատ շինականի որդի: Բայց նա ընտրել է նրանց, որովհետեւ նրանց արածի, գործունեության մեջ

¹ Առաջին անգամ տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրի 1962 թ. N 5-ում, ապա՝ Ալիբաևյանի անունի վրացագրով «Սևակ» քերթարարակ է այն Զաղվածքների մեկը թերթում ենք Երկրի ժողովածուի 5-րդ հատրից, որ տպագրվել է Երևանում, 1974 թ.:

² Նույն տեղում:

է մարմնավորել, դրսեւորվել մեր ազգային խառնվածքը, պայքարի ու հաղթանակի հերոսական ոգին: Երանց միջոցով է պատկերել մեր գրի ու գրականության, արվեստի ու մշակույթի պատմության նախահիմքերը, որոնց վրա ձեւավորվել ու բարձր աստիճանի է հասել մեր ամբողջական գրականությունը: Իր գեղուցման մեջ Սեւակը ավարտել է իր ասելիքը հայ դպրության հիմնադիր, գրերի գյուտի հանձարեղ հեղինակ, մեծ երաժիշտ ու քաղաքագետ Մեսրոպ Մաշտոցի մոնումենտալ կերպարը: Հիրավի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը հզոր տաղանդի ստեղծագործություն է, ուր ցոլանում է մեր ժողովրդի գոյատևման պայքարի պատմությունն ու հաղթանակը:

А. А. Мурадян - Поем - «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» - Выясняя основную тенденцию исторических поэм Паруйра Севака, учитывая его поэтический темперамент, свежесть его поэзии, публицический дух, автор считает Севака первым поэтом школы Чаренца, что является новой мыслью, новой характеристикой в нашем литературоведении.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Ս. Պետերբուրգում առայսօր պահպանվել են ճարտարապետ Ա. Ֆելտենի նախագծով 1779 թ. կառուցված հայկական երկու եկեղեցիներ, որոնցից մեկը՝ Ս. Եկատերինյան, գտնվում է Նեւսկու պողոտայի վրա, իսկ մյուսը՝ Ս. Հարությունը, Վասիլեյան կղզու Սմոլենսկյան հայկական գերեզմանատանը: Ներկա հողվածում խոսվում է հայոց դպրության եւ մշակույթի երկու երախտավորների մասին:

ՄԱՌԼԵՆՍԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆՈՅ

Գր. Ս. Գրիգորյան

Այս գերեզմանոցում են թաղված բազմաթիվ հայորդիներ, որոնց հուշակոթողները, ցավոք, գտնվում են բարձիթողի վիճակում. շատ հուշարձաններ ընկած են իրենց պատվանդաններից, ծածկված են խիտ բուսականությամբ կամ չարամտորեն ջարդոտված են: Այս ամենի մասին մենք բողոքեցինք Պետերբուրգի հուշարձանների պահպանման Գլխավոր վարչության ղեկավարությանը, որը խոստացավ առանձնակի ուշադրություն դարձնել հայկական հուշարձանների պահպանությանը:

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ

Կոթողային հուշարձանների մեջ աչքի է ընկնում Ռուսաստանում հայկական տպագրության գործի սկզբնավորող Գրիգոր Խալդարյանի տապանաքարը: Տապանագիրը վկայում է, որ Գր. Խալդարյանը ծնունդով եղել է Սպահանից, մանկության տարիներն անց է կացրել Նոր Զուղայում, ապա շրջագայել է Հնդկաստանում, Անգլիայում եւ այլուր: Լոնդոնում եղած ժամանակ ծուլել է տվել հայերեն տառեր եւ առաջին անգամ այստեղ հրատարակել «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց: Թարգմանութիւն ի հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յոհաննիս Սկրոդերանէ գերմանացւոյ: Եւ արտահանեալ ի Գանձ Արամեան կոչեցեալ գրգոյն աշխատութեամբ Զուղայեցի Խօջամալի որդւոյն Գրիգորի, ի Լոնդոն տպ. Ռիվինգտոն, 1780 թ.» վերտառությամբ գիրքը:

1781 թ. Գր. Խալդարյանը բնակություն է հաստատում Պետերբուրգում, ուր եւ իրագործում է իր փայփայած ծրագիրը՝ հիմնում հայկական տպարան: Պետերբուրգում հրատարակված առաջին գիրքը կոչվում էր «Այբբենարան» (1781 թ.): Այն լույս ընծայվեց ռուսահայոց հոգեւոր առաջնորդ Հովսեփ Արղությանի հորդորանքով եւ նկատելի դեր կատարեց հայ մանուկների կրթության գործում: Գր. Խալդարյանը կազմում եւ հրատարակում է նաեւ հայ-ռուսերեն բառարան «Գիրք, որ կոչի Շաւիղ լեզւագիտութեան» վերնագրով:

Գր. Խալդարյանի պետերբուրգյան հայկական տպարանն իր հրատարակությունների միջոցով մեծապես նպաստեց հայերի՝ ռուսական կողմնորոշումն ամրապնդելու խնդրին:

Այս երախտավորի կյանքի ու գործի մասին հակիրճ փորագրված է նրա տապանաքարին, որ այժմ գտնվում է Լազարյանների կառուցած ս. Հարություն եկեղեցու արեւելյան կողմում: Սեւ գրանիտե երկաստիճան պատվանդանին դրված ուղղանկյունաձեւ տապանաքարի երեսին եւ կողմերին փորագրված է 54 տող բանաստեղծություն.

244

ՔԱՐԵՍ ՏԱՊԱՆՍ ԱՅՍ ԲԱՂԶԱԼԻ
ՆՆՋԵՑԵԼՈՅ ՀԱՆԳԻՍՏ ԿՈՇԻ.
ԱՍՏ ԱՄՓՈԹԵԱԼ ԿԱՅ ՊԱՂԵՍԻ